ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի ԳԱ թղթակից անդամ Ս. Ս. ԱՐԻՎՇԱՏՅԱՆ

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» մի եզակի հուշարձան է, որը հնարավորություն է տալիս լուսաբանելու ժամանակի գաղափարական միտումները և հեղինակի սոցիալ-քաղաքական հայացքները։ Դրանով նա էապես տարբերվում է V դարի մյուս պատմագրական երկերից։ Այստեղ հեղինակը հանդես է գալիս ոչ միայն որպես պատմիչ և գրող, այլև հասարակագետ և քաղաքական մտածող, որն իր պատմական շարադրանքը ենթարկել է որոշակի կոնցեպցիայի։ Եվ այդ կոնցեպցիան, ինչպես կտեսնենք, արտահայտում էր իր ժամանակվա Հայաստանի հասարակական պահանջմունքներն ու մտայնությունը։

Առաջին հերթին պետք է նշել, որ «Հայոց պատմության» հիմքում դրված է ազգային անկախության գաղափարը Խորենացին ձգտում է նախ և առաջ ցույց տալ ընթերցողին, որ պարսիկների և բյուզանդացիների կողմից նվաճված Հայաստանը ունի նույնքան հին պատմություն, որքան Պարսկաստանն ու Հունաստանը, որ հայ ժողովուրդը աշխարհի հնագույն կուլտուրական ժողովուրդների հասակակիցն է։ Դրանով կարծես թե հիմնավորվում է հայերի անկախության և ինքնուրույն պետական գոյության վերականգնման ձգտումը։

Նա օգտագործում է հին հայկական վիպերգությունը և աստվածաշնչային ավանդությունները ցույց տալու համար իր տեսակետից կարևոր այն հանգամանքը, որ հայերը սերում են բիբլիական պատրիարքներից։ Շարադրելով իրեն հայտնի ավանդությունները՝ հայոց նախահայրեր Հայկի և Արամի քաջագործությունների պատմությունը, նա իր ժամանակակիցներին կոչ է անում հետևել նախնիների օրինակին, անձնազոհ պայքարով ու արիությամբ վերանվաճել ազատությունը և ապահովել հարազատ ժողովրդի բարօրությունը։ Խորենացին հատուկ շեշտում է այն միտքը, որ հայերի նախնիները երբեք չեն հաշտվել ենթակա և նվաճված վիճակի հետ։ Իրենց արյամբ և քաջությամբ նրանք հասնում էին անկախության։ Չկա ավելի գառը բան, քան այլ ժողովուրդներից կախման մեջ լինելը և օտարերկրյա լուծը տանելը։ Իր ժամանակակիցներին կարծես խրատելու համար Խորենացին բերում է Գեղամի թոռ, Հարմայի որդի Արամի օրինակը. «Սա աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգեր ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա»[1]։

Հայրենասիրությունը և հայրենիքի անկախության համար անձնազոհությունը այն գերագույն առաքինություններն են, որոնցով օժտված պետք է լինեն ոչ միայն Հայաստան աշխարհի երևելի այրերը, այլև ամբողջ ժողովուրդը։

Ցույց տալով, որ հայերն ունեն նույնքան հին ծագում, որքան և նրանց հարևանները, և որ նրանք ունեն նույնքան մեծ նախահայրեր, որոնք իրենց արյան գնով ու խիզախությամբ նվաճել են ազատ ապրելու իրավունքը, խո-

---

[1] *Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, թարգմ. Ս. Մալխասյանի. Երևան 1981, էջ 116 (այսուհետև էջերը կնշվեն տողամիջում)։*

ռենացին հաստատում է, որ Հայոց թագավորությունը ստեղծվել է նախնիների պայքարի և արիության իրավունքով։ Նա հատուկ կանգ է առնում Պարույրի, առաջին հայոց թագակիրի ծառայությունների վրա, որին հաջողվեց վերջ դնել Ասորեստանի կարճատև գերիշխանությանը և հիմնել Հայկական թագավորություն։

Խորենացին չի թաքցնում իր հրճվանքը Պարույրի և նրա ժառանգների քաջագործություններից, որոնք այդքան վաղ, ասորեստանյան բռնակալ Սարդանապալի ժամանակ գրեցին հայոց պետականության հիմքերը։ «Ահա այժմ ես զվարճանում եմ՝ ոչ փոքր ուրախություն զգալով, որ հասնում եմ այն տեղը, երբ մեր բնիկ նախնիների սերունդները թագավորության աստիճանի են հասնում։ Ուստի վայել է մեզ այստեղ մեծ գործ կատարել և շատ պատմական ճառեր գրել» (128—129։)

Ազգային սուվերենության, անկախ հայկական պետության վերականգնման գաղափարը այստեղ Խորենացու մոտ գտնում է իր վառ և անսքող արտահայտությունը, մի գաղափար, որի համար և ձեռնարկվել է հարազատ ժողովրդի ամբողջական պատմության ստեղծման այս աննախադեպ փորձը։ Որպեսզի ավելի ցցուն կերպով ներկայացնի այն անտանելի պայմանները, որոնք իշխում են իր օրոք Հայաստանում օտարների լծի տակ, Խորենացին հակադրում է մռայլ ներկան լուսավոր ու փառավոր անցյալին, փառաբանում է հին թագավորներին, «որովհետև,—ասում է նա,—մեր թագավորների մեջ ինձ այս մարդիկ են սիրելի, իբրև բնիկներ, արյունակիցներ և իսկական հարազատներ։ Ես շատ կփափագեի, որ այն ժամանակ Փրկիչն եկած և ինձ գնած լիներ, որ նրանց ժամանակ ես աշխարհ եկած լինեի, նրանց տեսությամբ զվարճանայի և այժմյան վտանգներից խուսափած լինեի։ Բայց շատ վաղ մեզանից այդ դրությունը փախավ և երես թեքեց բախտը» (130)։

Այստեղ արտահայտված է իր երկրի ճակատագրով դառնացած հայրենասերի ոչ միայն վիշտը, այլև ժամանակակիցներին ուղղված կոչը՝ վերագտնել անցյալի փառքը, վերականգնել կորցրած ազատությունը և սեփական թագավորությունը։ Այստեղ չկա ո՛չ քրիստոնեական հեզություն, ո՛չ էլ կատարվածը ճակատագրի թելադրանքով ընդունելու հնազանդություն, թեև հիշատակված են և՛ փրկիչ Քրիստոսը, և՛ ճակատագիրը։ Բայց կա բացահայտ ձգտում հայոց թագավորության ծագման մասին կիսաառասպելական տեղեկություններն ամրապնդել Աստվածաշնչի հեղինակությամբ, որպեսզի ընթերցողի մոտ ոչ մի կասկած չմնա, որ հայոց թագավորությունը հին աշխարհի պետությունների մեջ իրավահավասար մեծություն է։ Ահա ինչ է ասում Խորենացին իր միտքը հաստատելու համար. «Եվ որ այդ ժամանակները մեր ազգը թագավորություն ուներ՝ սրան վկայում է Երեմիա մարգարեն իր մարգարեության մեջ՝ Բաբելոնի դեմ պատերազմի հրավիրելով. «Հրաման տուր, ասում է նա, Արարատյան թագավորությանը և Ասքանազյան գնդին»։ Սա ապացույց է, որ այդ ժամանակ մենք ունեցել ենք թագավորություն» (130)։

Ըստ Խորենացու, եթե Հայոց թագավորության հնությունը ճանաչված է այնպիսի գրքի կողմից, ինչպիսին Աստվածաշունչն է, ճանաչված է Հին կտակարանի մարգարեների կողմից, ապա դա Հայաստանի միջազգային ճանաչման յուրատեսակ արտահայտությունն է։ Իսկ եթե դա իրոք այդպես է, ոչ ոք չի կարող կասկածել հայերի պահանջի արդարության վրա։ Ուրեմն ժամանակակիցներն էլ բոլոր հիմքերն ունեն երկրի անկախության վերականգնման համար։ Ճիշտ է, և հին ժամանակներում պատահել է, որ թշնամիները հարձակվել են Հայաստանի վրա և ենթարկել այն իրենց, բայց այդ տևել է ոչ երկար, հայերը ապստամբել են միշտ և նորից վերաստեղծել են իրենց պետությունը։ Դա չպետք է մոռանան ժամանակակից գործիչները, անվանի նախարարները, որոնք սերում են հին հայկական թագավորների զինակիցներից։

Հայոց պետության անկայունության պատճառներից մեկը, ըստ Խորենացու, նրանց համեմատաբար սակավաթիվ լինելն է, այն, որ հայերի ուժերը և նրանց թշնամիների բանակները միշտ էլ քանակապես անհամեմատելի են եղել։ Բայց հայերը այդ թվական դերակշռությանը միշտ հակադրել են քաջություն և հերոսություն։ Հենց դա էլ արժանի է գրանցվելու պատմության էջերում և օրինակ ծառայելու նոր սերունդների համար։ «Որովհետև մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով,—ասում է Խորենացին,— և շատ անդամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհումն էլ քաջության շատ գործեր կան գործված ղրելու և հիշատակելու արժանի» (96)։

Խորենացին իր «Պատմությունը» գրում է այն նպատակով, որպեսզի իր ժամանակակիցներին հիշեցնի այդ քաջագործությունների մասին, նրանց աչքի առաջ բացի պատմական դեպքերի շրջհատվող շղթան, ժողովրդի կյանքի ամբողջական պատկերը՝ հաղթանակներն ու ժամանակավոր պարտությունները, որպեսզի ընթերցողները համոզվեն, որ հայ ժողովրդին հատուկ է ազատասիրությունը և անկախության ձգտումը, դրա համար կռվելու պատրաստակամությունը և հերոսությունը։

Կասկածից վեր է, որ պատմիչի և նրա մեկենասի միջև գոյություն ուներ գաղափարների միասնություն, և նրանք որպես համախոհներ արտահայտում էին հասարակության այն ստվար հատվածի տրամադրությունը, որը դժգոհ էր օտարների տիրակալությունից։ Նրա կամքը կատարելով, Խորենացին մտածում է այն մասին, որ իր աշխատությունը չմնա ընթերցողների նեղ շրջանակում, որ այն դուրս գա լայն ասպարեզ և որոշակի ազդեցություն գործի։ Գիտակցաբար «հասարակ լեզվով այս պատմություններն անելով», Խորենացին մտածում է այն մասին, որ ապագա ընթերցողները իր «պատմածների ճշմարտության կարոտելով՝ հաճախակի և անդադար կարդան մեր հայրենիքի պատմությունը» (243)։

Այդ պատմության ընթերցումը, որը գրված է հայրենասիրական մեծ պաթոսով, պետք է ոչ միայն գաղափարապես ազդեր ընթերցողի վրա, այլև մղեր նրան նպատակասլաց գործողության, որն ուներ որպես օրինակ որոշակի մի իդեալ։ Այդ իդեալը Խորենացին մարմնավորել է հայոց հին ցեղապետների և առաջին թագավորների կերպարներում, որոնք թշնամիների դեմ մղած կատաղի պայքարում դրեցին հայկական պետականության հիմքերը։

Խորենացու և նրա համախոհների համար գերագույն իդեալ է հանդիսացել մի պետական գործիչ, որի օրոք Հայոց թագավորությունը հասել էր իր զարգացման գագաթնակետին։ Այդպիսի իդեալ էր Խորենացու համար Տիգրան Մեծը։ Նրա մասին խոսելով, պատմիչն անկեղծորեն արտահայտում է ավատատիրական, նախարարական այն շրջանակի գաղափարախոսությունը, որոնց վերջնական նպատակը ոչ միայն օտարերկրյա լծից ազատվելն էր, այլև Հայոց թագավորության վերականգնումն էր և նրա սահմանների ընդարձակումը, ոչ միայն այլազգիներին տուրք վճարելու ստորացուցիչ պարտականությանը վերջ տալն էր, այլև ազատվելով՝ ուրիշներին հարկատու դարձնելը։ Ավատատիրությունը այլ կերպ չի պատկերացնում ազատությունն ու անկախությունը։

Մեզ համար տվյալ դեպքում երկրորդական նշանակություն ունի Խորենացու կողմից թույլ տրված անախրոնիզմը և հնագույն թագավորներից մեկի՝ Երվանդյան Տիգրանի նույնացումը Արտաշեսյան Տիգրան Մեծի հետ։ Վերջինիս օրոք էր, որ Հայաստանը, նրա պետությունը ծաղկում էր ապրում և տարածվում էր Կասպից ծովից մինչև Փյունիկիա, մինչև Միջերկրականի ափերը։ Չնայած այդ շփոթությանը, առասպելական և պատմական տեղեկությունների միաձուլման միջոցով Խորենացին կարողացել է լրիվ բացահայտել իր կոնցեպցիան և պետական-քաղաքական գործիչի իդեալը։

Տիգրան Մեծը այդ իդեալի վառ մարմնացումն է։ Խորենացին ինքը ուղղակիորեն ասում է այդ։ «Եվ այս գրքում ի՞նչ կա ինձ ավելի սիրելի, քան սրա մասին եղած գովեստներն ու պատմությունը երկարել» (133)։ Ինչո՞ւ է

նա առանձնացնում Տիգրանին հայ գահակալների շարքում և ինչո՞ւ է բերում որպես օրինակ՝ իր ժամանակակիցներին խրատելու և սթափեցնելու համար։ Կա մի քանի պատճառ, և դրանցից յուրաքանչյուրը կարող է լինել այն անհրաժեշտ պահանջների արտահայտությունը, որ ներկայացվում է թագավորին, թագավորական իշխանությանը և անկախ պետությանը։

Նախ և առաջ, ասում է Խորենացին, «սա մեր թագավորներից ամենահզորն և ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ» (132)։ Այսպիսով, ըստ Խորենացու, կարևոր նշանակություն ունի թագավորի անձը, նրա անձնական հատկանիշները։ Նա պետք է լինի խոհեմության, տիրականության և քաջության տիպար, որովհետև նշված հատկությունները գրավականն են բարեհաջող հասնելու այն նպատակներին, որոնց համար ապրում է պետությունը։

Երկրորդ էական տարբերությունը, որով Տիգրանն առանձնանում է մյուս հայ թագավորներից, այն է, որ նա «մեր բնակության սահմաններն ընդարձակելով՝ հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը» (132)։ Այստեղ դրվում է սուվերեն պետության սահմաններում տվյալ ժողովրդին պատկանող կամ նախկինում պատկանած հողերի հավաքման խնդիրը։ Թագավորի ռազմագիտական, զորավարական տաղանդը և քաղաքական հմտությունը ծառայում են պետության կարևորագույն ֆունկցիայի կատարմանը, որը սեփական տարածքների տիրապետումն ու պաշտպանությունն է, այդ տարածքներում գերագույն իշխանության իրականացումն է և բնակչության անվտանգության ապահովումը օտարերկրյա ոտնձգություններից։

Տիգրանի թագավորության երրորդ կարևոր առանձնահատկությունը այն է, որ «նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ (օտարների) լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ գնողներ և հարկապահանջներ» (132)։ Սուվերենությունը, ըստ Խորենացու, ինչպես տեսնում ենք, իր մեջ ընդգրկում է ոչ միայն երկիրը այլազգիների քաղաքական գերիշխանությունից և նրանց հարկեր վճարելուց ազատելը, այլև, իր ժամանակի պատկերացումներին համապատասխան, այլ ժողովուրդների վրա իշխանություն հաստատելը և նրանցից «օրինականորեն» հասնող տուրքերի գանձումը։ Դրա շնորհիվ երկրում ստեղծվեց նյութական բարեկեցություն, երկիրն սկսեց հարստանալ և մարդիկ ապրեցին այնպես, ինչպես վայել է իրենց արժանապատվությունը հարգող մարդկանց։ «Մթերքներ ոսկու և արծաթի, և պատվական քարերի և զգեստների և զանազան գույների և գործվածքների՝ տղամարդկանց և կանանց համար՝ առհասարակ նա բազմացրեց, որոնցով տգեղները գեղեցիկների նման սքանչելի էին երևում, իսկ գեղեցիկներն այս ժամանակի համեմատ դյուցազունների էին նմանվում» (132)։

Ըստ Խորենացու, լավ կարող է համարվել այն թագավորը, որն իր գործունեությամբ նպաստում է երկրի տնտեսական կյանքի ծաղկմանը, պայմաններ է ստեղծում նրա բնակիչների հարստացման համար, որովհետև երկրի հարստությունը սերտորեն կապված է պետության հզորության հետ, նրա ռազմական ուժի հետ, որը երկրի անկախության գրավականն է։

Այստեղ Խորենացին բացահայտում, մանրամասնում է պետական սուվերենության չորրորդ կարևոր առանձնահատկությունը, այն է՝ ռազմական հզորության ամրապնդման անհրաժեշտությունը, մշտական հոգատարությունը զորքի, նրա սպառազինության և մարտական ոգու ապահովման համար։ Տիգրանը, Խորենացու կարծիքով, այն իդեալական թագավորն էր, որը, բացի վերը թվարկված առաքինություններից, առանձնանում է նրանով, որ քաջ գիտակցում էր ռազմական հզորության նշանակությունը պետության բարգավաճման համար, և այդ պատճառով նրա հոգատարության և հատուկ ուշադրության շնորհիվ «հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողներն հաջող աղեղնավորներ, կոպալներով կռվողները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակներով. մերկերը պատսպարվեցին վահաններով և երկաթե զգեստներով։ Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեցին, միայն նրանց

արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու զենքերի փայլմունքը բավական էին թշնամիներին հալածելու և վանելու» (132—133)։

Առաջնակարգ բանակի ստեղծումը Տիգրանի կարևոր ծառայություններից մեկն է։ Առանց դրա չէր հաջողվի ո՛չ ազատել երկիրը այլազգիներին տուրք տալուց, ո՛չ ընդարձակել պետության սահմանները և վերադարձնել խլված հողերը, ո՛չ էլ ստիպել հարևաններին հարկ վճարել։ Լավ զորքը լավ տիրակալի հատկանիշն է, մի տիրակալի, որն իսկապես մտածում է երկրի ապահովության մասին։ Զորքի ուժից կամ թուլությունից է կախված պետության ուժն ու թուլությունը։ Այն երկիրը, որը չունի սեփական զորք, զրկված է իր անկախությունը պաշտպանելու հնարավորությունից, նա չունի իր սուվերենությունը պահպանելու համար անհրաժեշտ հենարան։

Խորենացին ուղղակի հայտարարում է, որ Տիգրանը պետք է սերունդների համար օրինակ հանդիսանա, եթե նրանք ուզում են վերագտնել Հայաստանի փառքն ու ազատությունը, փաստորեն հեղինակը հուշում է ընթերցողին, թե ինչ հետևություններ նա պետք է անի, իր աչքի առաջ ունենալով պետական գործիչի այդպիսի տիպար. «Բոլոր իր ժամանակակիցների համար նա եղավ նախանձելի, իսկ հետո եկողներիս համար ցանկալի եղան թե ինքը և թե իր ժամանակը։ Եվ ո՞ր իսկական մարդը, որ համակրում է արիական բարքի և խոհականության, չի զվարճանա սրա հիշատակությամբ և չի ձգտի նրա նման մարդ լինել։ Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց» (132)։

Քրիստոնյա պատմիչին բոլորովին չի հետաքրքրում այն հանգամանքը, որ քաջության, պետական իմաստության տիպար է հայտարարվում հեթանոս թագավորը։ Նույնպիսի վերաբերմունք Խորենացին ցուցաբերում է նաև Տիգրանի նախնի Պարույր թագավորի և նրա ժառանգների նկատմամբ։ Կրոնական գործոնը հետին պլան է մղվում և այս կամ այն թագավորի գործունեության գնահատման հարցում առաջնակարգ դեր է ձեռք բերում նրանց անմիջական ներդրումը անկախ հայկական պետության ստեղծման գործում, երկրի սուվերենության ամրապնդման հարցում նրանց ջանքերի հաջողության աստիճանը, երկրի բարօրության և նրա բնակիչների շահերի պաշտպանության մեջ նրանց անմիջական մասնակցության չափը։ Միանգամայն անկանխակալ և անաչառ մոտեցում, որը զարմանալի է ավատատիրական կարգերի պատմագրության ներկայացուցչի համար։ Այսպիսին է խորաթափանց մտքի տեր, նախարարական տների, կրոնական հոսանքների և կուսակցությունների շահերին սովորաբար համակիր կամ հակակիր գաղափարախոսներից տարբերվող, ողջ ազգի ճակատագրի մասին մտածող մեր հանճարեղ պատմիչը։

Հայաստանի քրիստոնյա թագավորներից ոչ մեկը Խորենացու կողմից չի արժանացել այնպիսի գնահատականների և դրվատանքի, որ տրված են հայոց հին պետության ձևավորման ու ծաղկման շրջանի հեթանոս թագավորներին։ Դեռ ավելին, նրանցից ոչ մեկը, բացի Տրդատից, այն էլ աստծու պատիժը կրելուց և քրիստոնեությունն ընդունելուց հետո, երբ նա օգնեց Գրիգոր Լուսավորչին մկրտել երկիրը, Խորենացու գրչի տակ չի դարձել պետական իմաստության կրողը և երկրի շահերը իր նեղ անձնական շահերից վեր դասողը։ Քրիստոնեական շրջանում այդ սկզբունքի կրողը Խորենացու մոտ դառնում են հոգևոր պետերը, պատրիարք-կաթողիկոսները, որոնք «աստծու կողմից տրված» իրենց իշխանությունը իրականացնում են երկրի փրկության համար, մինչդեռ աշխարհիկ իշխանության կրողները եսասեր, վայրենաբարո, անհեռատես մարդիկ են, որոնք իրենց գործողություններով խանգարում են եկեղեցական իշխանության ազնիվ և ստեղծագործ նախաձեռնություններին։ Նույնիսկ Վռամշապուհ թագավորը, որը կարևոր դեր խաղաց հայոց գրերի ստեղծման ու տարածման գործը կազմակերպելու հարցում, ներկայացված է սոսկ որպես կաթողիկոս Սահակ Պարթևի և վարդապետ Մեսրոպ Մաշտոցի համակիրն ու աջակիցը։

Խորենացու մոտ մենք տեսնում ենք հոգևոր իշխանության մեծարման և այն թուլացող թագավորական իշխանությանը հակադրելու միտում։ Երբեմն եկեղեցական իշխանությունը նույնիսկ հանգես է գալիս աշխարհիկ իշխանության հովանավորի և պաշտպանի դերում՝ պարսից արքունիքի և հայոց նախարարների հարձակումներից այն փրկելու համար։ Հավանական է, որ այդպես էլ եղել է որոշ ժամանակ, բայց տվյալ դեպքում կասկածից վեր է, որ Խորենացին արտահայտում է հոգևորականության միջավայրում մշակված տեսակետ, մի միջավայր, որին պատկանում էր ինքը։ Բացառված չէ, որ հեթանոսական շրջանի թագավորների (հատկապես նրանցից ամենանշանավորների) հակադրումը քրիստոնեական Հայաստանի թագավորներին որպես ենթատեքստ ուներ նրանցից ոմանց վարկաբեկումը՝ եկեղեցու իրավունքների ոտնահարման համար։ Եկեղեցին որոշ ժամանակ մրցում էր թագավորական տան հետ ոչ միայն իր հարստություններով, այլ պետական գործերին մասնակցելով։

Վերջին հայ Արշակունիների գործունեության գնահատման հարցում Խորենացին, անշուշտ, տուրք է տվել եկեղեցական տեսակետին։ Սակայն նա պատկանում էր հոգևորականության այն թևին, որը շատ շուտ հասկացավ երկրի, այդ թվում նաև եկեղեցու ապագայի համար թագավորական տան վերացման ամբողջ վտանգն ու վնասը։ Դրա հետևանքով եկեղեցին ևս զրկվեց թևև իրեն երբեմն վիրավորող, նեղացնող, բայց վերջին հաշվով հավատարիմ պաշտպանից։ Նախարարները, որպես փոքրիկ թագավորիկներ, որոնք տրտնջում ու դժգոհում էին գերագույն թագավորական իշխանությունից, դրանում չէին տեսնում որևէ վտանգ, ընդհակառակը, թագավորության վերացումը հասապատասխանում էր նրանց կենտրոնախույս ձգտումներին։ Եվ միայն Սահակ կաթողիկոսը, ինչպես ասում է Խորենացին, հասկանում էր երկրի համար այդ քայլի բոլոր բացասական հետևանքները։ Նա, ըստ Խորենացու, համոզում էր հայ նախարարներին չդիմել պարսից արքունիքին և չպահանջել գահընկեց անել Արտաշես թագավորին։ Կաթողիկոսը գիտակցում էր, որ զրանով անհեռատես նախարարները «իրենք իրենց կործանումն են նյութում», որ վերացնելով թագավորությունը և ստանալով իրենց ուզած պարսից կուսակալին, նրանք կզրկվեն իրենց թագավորությունը վերածնելու հնարավորությունից և կդառնան այլազգիների հլու-հպատակ ծառաները։ Սահակ Պարթևը մերժում է նախարարների առաջարկությունը՝ միանալ դավադիրներին սեփական թագավորի դեմ։ Խորենացին նրա շուրթերին է դնում հետևյալ պատասխանը, որով կտրականապես մերժվում է Արտաշեսին և թագավորական իշխանությունը տապալելու առաջարկը. «Քավ լիցի, որ ես իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին, որ ես չպատեմ բեկվածին կամ հիվանդացածին, այլ գահավեժ անեմ» (305)։

Կաթողիկոսն, անշուշտ, արտահայտում է հեղինակի տեսակետը՝ ավելի լավ է ունենալ վատ, բայց սեփական թագավոր, քան թե լավ, բայց օտար, որովհետև լավ օտար թագավորը լավ է միայն իր երկրի համար, իսկ Հայաստանի համար նա կլինի սեփական վատ թագավորից էլ վատ։ «Եվ ինչպե՞ս կարելի է,—ասում է Խորենացին՝ Սահակ Պարթևի բերանով,—այդ իմ ախտավոր ոչխարը փոխել առողջ գաղանի հետ, որի հենց առողջությունը մեզ համար պատուհաս է» (306)։

Սակայն նախարարները կատարեցին իրենց սև գործը, հայոց թագավորությունը հենց իրենց պահանջով վերացվեց, իսկ Սահակ Պարթևը, որը դիմադրություն ցույց տվեց նրանց պլաններին, զրկվեց պատրիարքական աթոռից։ «Թշնամասեր զրպարտիչ նախարարներիդ» այդ արարքը Խորենացին համարում է ամենակործանարար սխալներից մեկը, որը նրանք կատարեցին իրենց կուրության և հիմարության պատճառով։ Հաջորդող դեպքերը ամենայն պարզությամբ ցույց տվեցին Սահակ Պարթևի ճշմարտությունը և հեռատեսությունը։ Նախարարներն իրենք շուտով համոզվեցին, թե ինչ անուղղելի սխալ են կատարել, բայց արդեն ուշ էր։ Հարկավոր էր այժմ ահավոր ջանքեր գործադրել պարսից ծանր լուծը թոթափելու համար։ Եր-

կիրը կեղևքված էր անտանելի հարկերով, ժողովուրդն աղքատացել էր, նախարարները ճնշված և վիրավորված, եկեղեցին հայտնվել էր պարսից մոգերի կործանիչ հարվածների տակ, որոնք ձգտում էին երկրում արմատավորել մաղդեական կրոնը։

Եվ այսպես, իր նպատակամետ շարադրանքով, անցյալն ու ներկան հակադրելով, Խորենացին ցույց է տալիս ստեղծված անտանելի վիճակի և օտարերկրյա լծի դեմ անդիջում պայքարի անհրաժեշտությունը՝ հանուն Հայաստանի պետական անկախության վերականգնման։ Իր երկը նա ավարտում է հուշակավոր «Ողբով», որտեղ արտահայտված է ոչ միայն հայրենասերի վիշտը հայրենիքի ծանր վիճակի և հայրենակիցների աղետալի դրության համար, որը ստեղծվել է Հայոց թագավորության անկման պատճառով, այլև այն վերականգնելու երազանքը։

Հակադրելով փառավոր անցյալը մռայլ ներկային, նա ոչ մի դրական ու լուսավոր բան չի տեսնում իր շրջապատում։ Զավթիչներն անարգել են ամենը, ինչ սուրբ է հայերի համար, կեղեքում ու տանջում են նրանց գազանի դաժանությամբ։ «Մեզ տիրեցին խստասիրտ ու չար թագավորներ, որոնք ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս։ Կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները զորացած։ Հավատը ծախվում է այստեղի ունայն կյանքի համար։ Ասպատակություններ են դալիս անհատնում, ...դեպի օտարություն են աքսորվում ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները...» (316—317)։

Համատարած թալանը, աղքատությունը, աղատների և ռամիկների աքսորն ու դերեվարությունը, զավթիչների սահմանած կարգերը առաջ են բերել բարոյականության անկում, անբարոյականության լայն տարածում ժողովրդի տարբեր խավերում. «Զինվորականները՝ անարի, ...կողոպտիչ, գինեմոլ, հելուզակ, ավազակների ընութենակից։ Իշխանները՝ ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր, ...ագահ, հափշտակող, աշխարհ ավերող... Դատավորները՝ տմարդի, սուտ խաբող, կաշառակեր, իրավունքը չպաշտպանող...» (316)։ Այլաբերումը դիպել է նաև հոգևոր դասին. «Ուսուցիչները՝ տխմար ու ինքնահավան, ... փողով ընտրված և ոչ սուրբ հոգով, ... և գայլ դարձած գիշատում են իրենց հոտերը։ Կրոնավորները՝ կեղծավոր, ցուցամոլ, անափառ... Վիճակավոր եպիսկոպոսները՝ հպարտ, դատեր սիրող, դատարկախոս, ծույլ, գիտություններն ու վարդապետական գրվածքներն ատող...» (315—316)։

Երկրին հասած աղետը պատմիչը գնահատում է որպես պատիժ մեղքերի համար, «համաձայն այն խոսքին, թե ամբարիշտներին խաղաղություն չկա» (316)։ Համեմատելով Հայաստանի ճակատագիրը Իսրայելի հետ, Խորենացին նշում է իր հայրենիքի ավելի ծանր վիճակը, այլաբանորեն բնութագրում է ողբերգական իրավիճակը, ընդգծելով, որ ի տարբերություն Իսրայելի, «մեր թշվառությունն ավելի է։ Որովհետև Մովսեսը վերացվում է, բայց Հեսուն չի հաջորդում, որ առաջնորդի դեպի Ավետյաց երկիրը։ ... Սեղեկիան գերի տարվեց, բայց չկա Զորաբաբել, որ տերությունը նորոգե։ Անտիոքոսը բռնադատում է թողնել հայրենի կրոնը, բայց Մատաթիան չի դիմադրում. պատերազմը մեզ շուրջանակի պաշարել է, բայց Մակաբեն չի փրկում» (313—314)։

Այս համեմատությունները ժխտական ձևով բացահայտում են նույն քաղաքական կոնցեպցիան, որի համաձայն Հայոց թագավորության վերացումը պարսիկների և բյուզանդացիների հակաօրինական բռնության արդյունք է, ինչպես նաև հայ նախարարների անհեռատեսության։ Բռնությանը պետք է հակադրվի բռնություն՝ հերոսական պայքար սեփական անկախ պետականության վերականգնման համար։ Դրա համար պետք է սեփական, հայկական Մակաբե՝ հզոր և անձնազոհ զորավար, որը կվռնդի թշնամուն հարազատ երկրից, պետք է Մատաթիա՝ հայրերի հավատի պաշտպանության համար, պետք է սեփական Զորաբաբել՝ թագավորության վերականգնման

և նրա հզորության ամրապնդման հասար։

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» որոշակի փիլիսոփայական-քաղաքական կոնցեպցիայի մարմնացումն էր։ Այն ծնվել էր V դարի 80-ական թթ. ոեալ պայմաններից, մի ժամանակաշրջան, երբ հակապարսկական ազատագրական շարժումը մշակում էր նաև իր քաղաքական ծրագիրը։ Երկրի սուվերենության վերականգնում, բուն հայկական նախարարական տների իշխանության հաստատում՝ ահա այն հիմնական և առաջատար գաղափարը, որի հիմնավորման համար ներգրավվել են և՛ հին առասպելները, և՛ Աստվածաշնչի հեղինակությունը, և՛ հեթանոսական Հայաստանի թագավորներին նվիրված ներբողները։ Իր գաղափարները Խորենացին մարմնավորել է մատչելի պատմագրական և գեղարվեստական ձևի մեջ։ Եվ դա ևս այն պատճառներից մեկն է, որ նա հսկայական ազդեցություն է ունեցել հայ միջնադարյան պատմագրության և սոցիալ-քաղաքական մտքի վրա։

Խորենացին առաջին հայ պատմիչն էր, որն իր պատմագրական երկի հիմքում դրել էր պատմափիլիսոփայական և քաղաքական կոնցեպցիա։ Դրանով իսկ նա դուրս է գալիս զուտ պատմագրության շրջանակներից և թևակոխում փիլիսոփայության ընդարձակ, որտեղ, ինչպես մենք տեսանք, նա հանգես է գալիս որպես վառ արտահայտված աշխարհիկ միտումներ ունեցող սոցիալ-քաղաքական մտքի հիմնադիր։

Անտիկ պատմագրության ավանդույթների շարունակող Խորենացին իր բարերար ազդեցությամբ բեղմնավորեց ողջ միջնադարյան հայ պատմագրությունը և հասարակագիտական միտքը։ Նրա հանճարի վկայությունն է նաև այն, որ «Հայոց պատմության» քննված գաղափարները դարերի ընթացքում չեն կորցրել իրենց ուժը և արդիական հնչեղություն ունեն մեր փոթորկալից օրերում։

МОВСЕС ХОРЕНАЦИ О НАЦИОНАЛЬНОМ СУВЕРЕНИТЕТЕ

Член-корр. АН Армении С. С. АРЕВШАТЯН

Резюме

«История Армении» Мовсеса Хоренаци выражает актуальную для своего времени социально-политическую концепцию, сформировавшуюся в ходе освободительного движения 80-х гг. V в. В основе «Истории Армении» лежит идея независимости армянского народа. Восстановление суверенитета страны является естественной необходимостью, вытекающей из ее многовековой истории. Предки армян доблестью и мужеством завоевали право на независимость. Народ, ведущий свое происхождение от библейских патриархов, не должен оставаться в подчинении других народов. В противовес настроениям уныния и отчаяния, охватившим некоторую часть общества после Аварайрской битвы, Хоренаци развивает антифаталистическую концепцию активной борьбы со злом. Патриотизм и свободолюбие являются высшими добродетелями, которыми должны обладать не только знатные мужи Армении, но и весь народ. В борьбе за возрождение армянской государственности идеалом для Хоренаци служат древние родоначальники и венценосцы, особенно наиболее выдающийся из них—Тигран Великий, при котором Армянское царство расширило свои границы, избавилось от уплаты дани и сделало других своими данниками. Личность царя, его мужество, властность, дар военачальника служат выполнению важнейших функций государства, выражающихся в надежной защите собственных земель, в возвращении отторгнутых чужеземцами территорий, в обеспечении безопасности и благоденствия собственного народа. Насилию и беззаконию должна быть противопоставлена непримиримая борьба за восстановление своего государства. Для этого необходим свой Маккавей— могучий и самоотверженный военачальник, свой Матафия—для защиты веры отцов, свой Зоровавель—для восстановления царства и укрепления его могущества.